սուն Հայազգի գերդաստանէ, և ունի եկեղեցի կամարակապ յանուն սուրբ Աստուածածնի շինուած գիւղական ժողովրդեան արդիւնքով։ Քսան հնգին զկնի ճաշին դարձեալ եկանք յՈւանաշէն, և երեկոյեան ժամերգութիւնն կատարեցինք այս գիւղի եկեղեցումն։ Ի կիւրակէի այս եկեղեցումն պատարագ մատուցաւ, և յետ աւարտման՝ գիւղական բազմութիւն դիմեցին Գասպար բէկի տուն՝ և կերակրվեցին, որովհետև նա հացկերոյթ էր պատրաստել այն և շրջակայ գիւղացւոց ի պատիւ գալստեան մերոյ այս գիւղն։ Կիրակի օրն այն տեղն ուրախութեամբ անցուցանելով՝ երկուշաբաթի աւուր՝ որ 23 էր օգոստոսի՝ տալով մեր օրհնութիւն կալուածատէր Գասպար բէկի Քալեանց և որդւոյ նորա Զումշուտ բէկի՝ օրհնելով սորա գերդաստանն և համօրէն ժողովրդականն, յ8 ժամու առաւօտուն դիմեցի ի Գէորգմախանէ ի գաւառակին Լաչինու, որ է 7 վերստ հեռի յՈւանաշէն գիւղէ։

(Շարունակելի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄՈՍ ԿՈՄԵՆԻՈՒՍ ԵՒ ՆՈՐԱ «ԴԻԴԱԿՏԻԿԱ ՄԱԳՆԱ»

(Շարունակութիւն)

Ի·րդ ԳԼՈՒԽ։

Գիտութեանց ոճ։

Գիտութիւն կամ գիտելիք իրերի մասին ոչ այլ ինչ է, եթէ ոչ ներքին հայեցողութիւն իրերի՝ գիտութիւնները այնքան գործողների միջնորդութեամբ են ստանում, որքան գործողք կան արտաքին հայեցողութեան մէջ, այսինքն [illegible] միջնորդութեամբ, [illegible] միջնորդութեամբ և [illegible] միջնորդութեամբ։ Ներքին աչքը խելքն է. առարկան է բոլոր՝ ինչ որ կայ խելքի արտաքոյ և մէջ. իսկ ներքին լոյսն է ուշադրութիւն։ Ներքին հայեցողութիւնը՝ արտաքինի նման՝ որոշեալ եղանակով է կատարւում։

Ուստի պատանին, որ կցանկայ գիտութեան խորհուրդները իմանալ, նա պէտք է այս չորս պայմանները ունենայ, 1) նա պէտք է ունենայ մաքուր ոգեկան աչք. 2) աչքին պէտք է առարկաներ ներկայացնուին. 3) նորա մէջ պէտք է ուշադրութիւն լինի. 4) ամենայն բան պէտք է նորան այնպէս ցոյց տրուի, որ մի բանը բղխում լինի միւսից, ինչպէս որ ոճը այդ պահանջում է, որպէս զի նա կարողանայ ամենայն բան և շուտ տեսնել։

Ընդունակութիւնը, ինչպէս և ոգին, Աստուծոյ պարգև է։ Բայց մենք իշխանութիւն ունինք այդ հայելին մաքուր պահպանել։ Նորան թողոտում և փճացնում են ոգւոյ ունայն պարապմունքները, որոնց ուրեմն պէտք է հեռացնել։ Մանուկին պէտք է հաղորդել այն, որ ինչ հարկաւոր և օգտաւէտ է։

Բայց որպէս զի հայելին լուսոյ շառաւիղները լաւ արձակէ, պէտք է առարկաներին պարտուպատշաճ դրութիւն տալ և լուսաւորել։ Թեթև ամպը հազիւ թէ նկատուում է. իսկ այն՝ ինչ որ պակաս է, նա բնաւ չի երևում։ Ուստի մանուկներին բնաւ չպէտք է տալ առարկաների թեթև ձևը, այլ ըստ կարողութեան նոյն իսկ առարկաները այնպէս՝ ինչպէս որ նոքա են, որպէս զի նոքա պարապեցնեն զգայարանքը և երևակայութիւնը։ Ամենայն բան պէտք է ներկայացնուի որքան կարելի է մօտկից

Պէտք է պահպանել յետագայ անգին կանոնը. ամենայն ինչ ներկայացրու արտաքին զգայարանքներին՝ տեսանելին՝ տեսողութեանը, լսելին՝ լսողութեանը, հոտառնելին՝ հոտոտելիքին, ճաշակելին՝ ճաշակին, շօշափելին՝ շօշափողութեանը, և այլն։

Սորա պատճառը երեք է, 1) ճանաչողութեան (գիտութեան) սկիզբը արտաքին զգայարանքների մէջ է գետեղուած, ուստի և ուսուցանելու սկիզբը պէտք է բղխէ իսկական հայեցողութիւնից, և ոչ թէ բառերի մեկնութիւններից. վերջինը միայն պակասորդի լրացուցիչն է. 2) իմացած բանի ճշմարտութիւնը և վաւերականութիւնը կախեալ է արտաքին զգայարանքների վկայութիւններից։ Նախ և առաջ պէտք է լինի զգայական աղդեցութիւն, որոյ միջնորդութեամբ հասկանալն ևս հնարաւոր կլինի։ Զգայութեամբ ստացած գիտութիւնը ինքն ըստ ինքեան վաւերականութիւն ունի դատողութեան և մտածողութեան ժամանակ. մինչ ընծայութեան (ինդուկտիօն) միջոցաւ գիտում ենք զգայական ըմբռնման վաւերականութեանը։ Այսպէս ծագում է ներքին համոզմունք. 3) ուր մնաց՝ որ արտաքին զգայարանքը յիշողութեան ամենահաւատարիմ օգնականներ են։ Ով միանգամ ուղղ տեսել է, նա նորան միշտ կճանաչէ։ Աստուածաշնչի և ուրիշ պատմութիւնները ամենից հետ մտքին պահւում են՝ երբ նոքա պատկերներով են նկարած։ Ոլավոր շատ ճշմարիտը ասաց՝ "Մի ականատեսը տասը լուրերից թանգ է"։ Դիտակնահատը (անատոմ) առաւել լաւ գիտէ մարդկային մարմին, քան ուրիշները, որոնք խօսքերով միայն ծանօթութիւն են ստացել այդ մասին։ Ականատեսութիւնը ամենալաւ վկայութիւն է համարւում։

Միայն այն տեղ, ուր բուն իրեր չկան, նոքա կարող են ճիշդ նկարագիրներով փոխանակուել. զորօրինակ՝ դիտակնահատական, կենդանագրական, բուսաբանական, երկրաչափական, աշխարհագրական, եռանկիւնաչափական նկարագրութիւններով և քարտեզներով։ Մարմինների կազմութեան իմանալը հիմնուած է բուն այդ մարմինների և դոցա ճիշդ գաղափարների տեսնելու վերայ։ Ուսումնարանը այդպիսի միջոցների պակասութիւն չպէտք է ունենայ։

Ուր որ լոյս չկայ, այն տեղ ոչինչ տեսնել կարելի չէ։ Իսկ ուսման լոյսը ուշադրութիւնն է։ Աչքերը փակած ոչ ինչ տեսնել չէ կարելի։ Ով որ ուշադիր չէ, նորա արտաքին զգայարաններից, ուստի և խելքից, ամենայն ինչ անհետանում է։ Այս ուրեմն՝ ուշադրութիւն դրդելը վարժապետի առաջին պարտականութիւնն է։

Բայց և բուն առարկաները ևս այնպէս պէտք է ներկայանան արտաքին զգայարանքներին, որ նոցանից յառաջացած աղդեցութիւնը ամուր հաստատուին։ Ի՞նչպէս պէտք է այդ նպատակին հասանենք։ Այդ ցոյց է տալիս մեզ տեսողութեան զգայարանքը։ Այն առարկան, որ կամենում ենք տեսանել, պէտք է աչքի առաջներս լինի ո՛չ շատ հեռու, ո՛չ շատ մօտիկ և ո՛չ կողմնակի, այլ ուղիղ աչքի առաջ. նախ՝ նա պէտք է երևի ամբողջութեամբ, և յետոյ ամենայն մասամբ առանձին,—և այն էլ կարգով, սկզբից մինչև ի վերջ, մինչև որ բոլոր զանազանութիւնները նկատուի։

Սորանից 9 կանոն կարելի է հանել նոցա համար, ոյք դիտութիւններ ուսուցանում են։

1) Ինչ որ աշակերտին հարկաւոր է իմանալ, այն պէտք է նորան ուսուցանել։ Բայց ումի՞ց աշակերտը կարող է ուսանել, եթէ ոչ վարժապետից։ Ուստի ոչ ինչ չպէտք է թաքցնել, ինչ որ հիմնաւորապէս դիտութեան համար հարկաւոր է։

2) Ամենայն ուսանելու բանը այնպէս պէտք է ուսուցանել, որ իբրև թէ նա աչքի առաջև լինի ձևացած, և միշտ ցոյց տալով օգուտը, որ նորանից յառաջ է գալիս։

3) Այն՝ ինչ որ ուսուցանում են, պէտք է ուղղակի տալ, և ոչ անուղղակի ճանապարհներով։ Աւելի վտանգաւոր՝ ֆնասակար բան չկայ, ինչպէս է աշակերտին շփոթելը մութը տեղեկութիւններ տալը, բացայայտութիւն և պարզութիւնը միշտ լաւ յատկութիւններ են։

4) Այն՝ ինչ որ ուսուցանում են, պէտք է այնպէս հաղորդուի, որպէս նա է՝ և կատարւում է, այսինքն իւր պատճառներով։ Առարկայի պատճառը բացատրել՝ այդ ասել է օժանդակել հիմնաւորապէս նորա ըմբռնելուն։ Իսկ ըմբռնել առարկայի էութիւնը՝ ասել է թէ՝ ճանաչել առարկաները նոցա պատճառական կապակցութեամբ։

5) Ինչ որ տրուում է իմանալու համար, այն պէտք է նախ ամբողջութեամբ տրուի, և ապա մաս առ մաս։ Այս կանոնի հիմքը արդէն ԺԶ-րդ դիտում տուած է։ Առ հասարակ առարկայի հետ

ծանօթացնելը նշանակում է ծանօթացնել նորա էութիւնը և յատկութիւնները։ Էութիւնը բացատրուում է յետագայ հարցմունքների պատասխաններով. ի՞նչ, որդե՞ւ և ինչո՞ւ համար։ Ի՞նչ հարցմունքին վերաբերուում է առարկայի անունը, տեսակը, գործողութիւնը, նպատակը։ Որդե՞ւ հարցմունքին վերաբերուում է առարկայի նպատակին համապատասխան, ձևը և կերպարանքը՝ ի՞նչ-համար հարցմունքին վերաբերուում է գործողութիւնը, այսինքն այն զօրութիւնը, որի պատճառով առարկան նպատակին յարմար է դառնում։

6) Առարկայի բոլոր մասերը անխտրութեամբ, մինչև անգամ ամենափոքրները, պէտք է քննուին ըստ իւրեանց կարգի, դրութեան, կապակցութեան։ Բնութեան ոչ մի արարածի մէջ չկայ ոչինչ առանց պատճառի. նորա մի մասը միշտ կախում ունի միւս մասից։ Առանց մասերի գիտենալը անկարելի է ամբողջի գիտենալը։

7) Ամենայն բանը պէտք է աստիճան առ աստիճան իմացուի. մի ժամանակում միայն մի բան կարելի է իմանալ։ Անկարելի մի և նոյն ժամանակ զննել երկու պատկեր կամ միանգամից երկու գիրք կարդալ։

8) Ամենայն առարկայի վերայ պէտք է կանք առնել այնքան ժամանակ, մինչև որ նա ուսանուի։ Բայց արդեօք լաւ ըմբռնելին ուսած է թէ ոչ՝ այդ բանը վարժապետը կարող է քննութեան և հրատարակութեան միջոցներով իմանալ։

9) Պէտք է ուշադրութիւն դարձնել առարկաների զանազանութեան վերայ, որդե՞ւ դի՞ է սուրբ թարգմանիչ ճանաչելն։ Ով որ լաւ զանազանում է, նա ուսուցանում է նոյնպէս լաւ։ Առարկաների բաղմատեսակութիւնը աշակերտին կշփոթեցնէ՝ եթէ չի պահպանուի մի կարգ և չի ցոյց տրուի մի առ մի յաջորդապէս։ Ուստի առարկաների զանազանութեան վերայ ուշադրութիւն դարձնելը՝ էական բան է հիմնաւոր ուսման համար։

ԻԱ - ՐԴ ԴԼԽԻՑ

ՈՏ ՀԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ։

"Առարկաների տեսութիւնը (տէօրիայ) հեշտ է, կարճ է և բերում է միայն զուարճութիւն. իսկ նորա գործադրութիւնը դժուար և բազադրեալ է, բայց զարմանալի պտուղներ է բերում"։ Այսպէս ասում է Վիւէսը։ Եթէ այս ճշմարիտ է, ուրեմն պէտք է գտնել այն ճանապարհը, որով մանուկները դիւրութեամբ բերուին այն ծայրագոյնին, որ իմանան ճարտարութեանց մէջ պարունակած իրերի գործածութիւնը։

Ճարտարութիւնը երեք բան է պահանջում, 1) օրինակ կամ գաղափար, այսինքն մի որոշեալ արտաքին ձև, որ ճարտարապետից քննուում է՝ և որին նա աշխատում է հետևել. 2) նիւթ, որին պէտք է այն ձևը տալ. և 3) գործիքներ, որոց միջոցով ստեղծագործութիւնը պէտք է գոյանայ։

Եթէ գաղափարը, նիւթը և գործիքները տուած են, ապա ճարտարութեան տեսութիւնը դարձեալ պահանջում է՝ 1) կանոնաւոր գործածութիւն, 2) խելացի առաջնորդութիւն, և 3) յաճախօրէն վարժութիւն։ Ուստի աշակերտին պէտք է ցոյց տալ, ո՞ւր և ի՞նչպէս պէտք է գործածել իւրաքանչիւր գործիքը, ի՞նչպիսի ընթացք և ուղղութիւն պէտք է տայ նոցա, որ չխանգարուի. և վերջապէս, ինչպէս պէտք է վարպետութիւն ստանալ։

Սորա համար պէտք է տասն ու մի կանոն պահպանել, վեցը գործածութեան, երեքը առաջնորդութեան, և երկուսը վարժութեան համար։

1) Այն՝ ինչ որ պէտք է գործել, կարելի է ուսանել միայն գործելով։ Մեքենագործները անմեղ ժամանակ չեն կորցնում աշակերտների հետ գատողութիւններ անելով, բայց իսկոյն նոցա գործնական պարապմունքներ տալիս են։ Գրութիւնը միայն գրերով կարող են սովորել, երգեցողութիւնը՝ երգելով, մտածողութիւնը՝ մտածելով։

2) Ինչ որ կատարուելու է, նորա որոշեալ ձևը կամ գաղափարը պէտք է աչքի առաջ լինի։ Դա աշակերտի համար օրինակ լինելու է։

3) Գործիքների գործածութիւնը իրաւ պէտք է ցոյց տրուի, միայն խօսքերը անօգուտ են։ Վաղուց Կուինտիլիանոսը ասաց, "Օրինակը կարճ է ուսուցանում"։ Մարդուս հետևող էակ է։ Ուստի մանուկներին նախընթացը փորձառու հետևող է դնում։

4) Առաջին վարժութիւնները պէտք է մանների

վերայ կատարուին, և ոչ ամբողջ ստեղծագործութեան վերայ։ Ստաղծագործը իւր աշակերտին նախ Էրէթիքներ շինել չի ուսուցանում, այլ կացին բռնելը, գերաններ սղելը, տախտակներ ռանդելը և ն։ Նկարիչը նմանապէս այդպէս է առնում։

5) Առաջին վարժութիւնները ծանօթ նիւթերի վերայ պէտք է կատարուին։ Աշակերտը բնաւ չը պէտք է բեռնաւորուի այնպիսի առարկաներով, որոնք նորա հասկացողութեան և գիտութեան շրջանից արտաքոյ են, եթէ ոչ նա էնդիներէն հետ գործ կունենայ։

6) Հետևութիւնը անմիջապէս ցոյց տուած ձևով պէտք է կատարուի, վերջը՝ հետևութիւնը կարող է ազատօրէն լինել։ Այս կանոնը տեղ ունի որպէս մեքենայական ճարտարութեանց մէջ, նոյնպէս և գիտնական առարկաների մէջ։ Գրութիւնը մենք սովորում ենք ընտիր գեղագրութիւններից՝ ճշդութեամբ գծերին հետևելով։ Այսպէս է և լեզուի ոճի վարժութիւնը։ Զորօրինակ՝ օրինակ տալով հետևեալ նախադասութիւնը՝ ֆոնյերով հարուած է, դորան հետևելով կարելի է կազմել այս խօսքերը՝ ֆոէրով հարուած է, ոդրոնով հարուած է, ոբրէով հարուած է, խեչով հարուած է և ն։

7) Օրինակները կարողութեան չափ կատարեալ պէտք է լինին, որպէս զի աշակերտը միայն կատարելութեան հետևէ։ Որպէս անկարելի է ծուռը քանոնով ուղիղ գիծ քաշել, այնպէս չէ կարելի կատարելութիւն զոյացնել անկատար ձևի նմանութեամբ։

8) Առաջին հետևութիւնները կարողութեան չափ ճշդիւ պէտք է լինին, այսինքն քանի կարելի է՝ գաղափարին նման։ Երևելի հին սրնդահար Տիմոթէոսը նախադաս էր համարում երգեցողութեան առաջին դասերը անձամբ տալ, քան ուղղել այն սխալները, որ յառաջացած էին միւս վարժապետներից։ Բոլորը յաջողութիւնը կախուած է առաջին հետևութեանց ճշդութիւնից։

9) Հետևութեան ժամանակ գործուած սխալմունքը իսկոյն պէտք է վարժապետը ուղղէ այնպէս՝ ինչպէս որ կանոնը պահանջում է։ Օրինակը կարապետում է։ կանոնները յաջորդում են։ Ուստի ցոյց տուեցէք սխալմունքը, և ապա տուէք կանոնը կարճ և բացայայտ։

10) Ճարտարութեան ամենակատարեալ ձևութիւնը՝ բաղադրական և վերլուծականն է։ բաղադրութիւնը առաւել կարևոր է։ Ամենայն առարկան և ձեռագործը մեզ երևում են իւրեանց բաղադրութեամբ։ Մենք նորան վերլուծում ենք, աշխատում ենք գտնել նորա կազմութիւնը, և եթէ կարող ենք, նոր ի նորոյ այն կազմում ենք, գոնեայ մենք հասկանում ենք, թէ ի՞նչպէս է կազմուած։

Ուրեմն նախ օրինակներ և գաղափարներ, յետոյ հետևութիւններ, յետոյ ազատ խորհրդածութիւններ և ճիշդ վերլուծութիւններ, և ապա դարձեալ խորհրդածութիւններ։

11) Վարժութիւնները այնքան ժամանակ պէտք է շարունակուին, մինչև որ վարժուողը հմտութիւն և վարպետութիւն ստանայ ճարտարութեան մէջ։

(Մ՝ուտ՝ն է յետոյ։)

ԱՐՈՒԵՍՏ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԵԱՆ*)

Զինաստի Բիժնի մը յօրինուած, Վրանկ-հի Կայ-սէրս-Ընեան 36րդ թուին (յամի 1697)։

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Թէպէտ՝ թիկնը (չաստուած Զինաստանի) մեր օրերը չափած է և անոնց տէրն է, ոակայն մեզի աւանդ տուած է։ Անձ չ'խտրեր, առաքինութիւնն է միայն՝ որ անոր աչքին կերևի. և ո՛վ որ առաքինի է՝ ներսէն վկայութիւն մը կզգայ՝ թէ բարեկամ է անոր հետ։

Ուստի ով որ երկայն ապրիլ կուզէ՝ պէտք է որ ամենէն յառաջ առաքինութիւն սովրի։ Մարմնոյն վիճակը խնամելու հետ ի գործ ածուած առաքի-

(*) Զինաստան ճանապարհորդող անդրկացիի մը հաղորդածն է։